Ադրբեջանին ռազմական տեխնիկայի մատակարարման շուրջ

Փորձագետի մեկնաբանություն, 04.08.2024 թ.

Արա Հ. Մարջանյան[1]

Ս. թ. հուլիսի 22-ին «ԱՌՎԱԿ» կենտրոնի կայքում հրապարակվեց մեր «Գլոբալ «Հարավի» և «Հյուսիսի» միջև» հոդվածը[2], որտեղ, ի շարս այլի, համեմատական վերլուծություն էր իրականացվել 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի և Հայաստանի կողմից պատվիրված և նրանց մատակարարված սպառազինությունների ցանկի ու բնութագրերի վերաբերյալ:

Մասնավորապես, հոդվածում նշվում էր (Աղյուսակ 5 և ներքև), որ 2020–2024 թթ. ժամանակահատվածում Ադրբեջանին մատակարարվել էր 57.15 մլն TIV արժողությամբ զինատեսակներ՝ հիմնականում Թուրքիայից և Իսրայելից, ինչպես նաև՝ Իտալիայից և ԱՄՆ-ից: Վերջին պարագայում խոսքը իտալական *«Leonardo»* ընկերության C-27J *Spartan* ռազմա-տրանսպորտային ինքնաթիռների և այդ ինքնաթիռների ամերիկյան տուրբո-պտուտակային արդի, շատ արդյունավետ շարժիչների մասին է: Ընդ որում, մամուլի հաղորդագրություններից հետևում է, որ իտալական ինքնաթիռները Ադրբեջան կժամանեն արդեն վերջնական տեսքով, այսինքն՝ շարժիչներով: Այնուհետև հոդվածում բարձրացվում էր հետևյալ հարցը.

«Նշանակո՞ւմ է, արդյոք, ՍՄԽՀԻ-ի (SIPRI) զինատեսակների մատակարարման շտեմարանում Ադրբեջանի համար AE-2100D3 տուրբո-պտուտակային շարժիչների առանձին տողով նշումը, որ Ադրբեջանին մատակարարվելու է նաև դրանց առանձին, անհայտ թվով, խմբաքանակ: Այն էլ՝ «նոր», և տեխնոլոգիական արտահոսքի կանխման խստագույն ռեժիմի տակ գտնվող: Ու եթե այո, ապա ի՞նչ նպատակով: Բացի դա, հայտնի է, որ AE-2100D3 շարժիչները պատկանում են բրիտանական «Rolls-Royce» ընկերությանը և օգտագործվում են, օրինակ՝ ամերիկյան C-130J ռազմա-տրանսպորտային ինքնաթիռներում: Ո՞րն է Ադրբեջանի հետ այս գործարքում Իտալիայի և Բրիտանիայի դերակատարումը»:

2024 թ. օգոստոսի 1-ին հայկական որոշ ԶԼՄ-ներում տեղեկություն տարածվեց, որ ըստ *«իսրայելական մամուլում տարածվող լուրերի՝ Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի միջև ռազմական համաձայնագիր է կնքվել, որով Թուրքիան Մեծ Բրիտանիայից գնել է 12 հատ «C-130J Hercules» ռազմատրանսպորտային ինքնաթիռներ: Ընդ որում ինքնաթիռների ձեռք բերման շուրջ կայացած համաձայնությունը պահվել է գաղտնի»*:

---

[1] ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ (էներգետիկա), ԵՄ ազգային փորձագետ (տրանսպորտ), ԵԱՏՄ Փորձագիտական ակումբի անդամ, առաջատար վերլուծաբան, տեխ.գ.դ., ա.գ.ա.:

[2] *Մարջանյան Ա. Հ.*, Գլոբալ «Հարավի» և «Հյուսիսի» միջև: «ԱՌՎԱԿ» կենտրոն (22.07.2024). https://arvak.am/գլոբալ-հարավի-և-հյուսիսի-միջև/ (բեռնման օրը՝ 03.08.2024):

Եթե հիշյալ հաղորդագրությունը համապատասխանում է իրականությանը[3], ապա՝ ՍՄԽՀԻ-ի շտեմարանում ԱՄՆ-ից՝ (ֆորմալ առումով՝ Իտալիայից) Ադրբեջանին անհայտ քանակով AE-2100D3 տուրբո-պտուտակային շարժիչների մատակարարումը՝ իտալական *«Leonardo»* ընկերության C-27J ինքնաթիռների գործարքի շրջանակներում, դիտվում է այլ, միանգամայն հասկանալի, լույսի ներքո:

Կարելի է ենթադրել, որ իտալական *«Leonardo»* ընկերության հետ գործարքը դիտարկվում է՝ որպես մի շարք գործող արգելանքները շրջանցելու միջոց, ՆԱՏՕ-ի անդամ-երկիր չհանդիսացող Ադրբեջանին մատակարարել AE-2100D3 շարժիչներ, որոնք կարող են օգտագործվել նաև «C-130J Hercules» նորացված ինքնաթիռներում: Առավել ևս, եթե դրանք համատեղվեն «Dowty» ընկերության R391 տիպի վեց թիանի կոմպոզիտային պրոպելլերներով (տես գլխագիր նկարում): Հաշվի առնելով Ադրբեջան-Թուրքիա ռազմավարական ռազմական համագործակցության բնույթն ու մակարդակը, մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ Միացյալ Թագավորությունից գնած թուրքական օդուժի «C-130J»-ները վաղ թե ուշ կհայտնվեն նաև Ադրբեջանում:

Ընդգծենք երեք մտահոգիչ հանգամանք. նախ, Իտալիան հանդիսանում է Ադրբեջանի թիվ 1 առևտրային գործընկերը, և ադրբեջանական բյուջեն, այդ թվում՝ ռազմական, ամենամեծ չափով «լցնող» երկիրը: Ուստի, Ադրբեջանին երկակի նշանակության զգայուն տեխնոլոգիաների փոխանցման արգելանքների հաղթահարման գործում այն «բնական» թեկնածու է:

Այնուհետև, ՄԹ–Թուրքիա այս գործարքի մասին տեղեկությունները իսրայելական մամուլում հայտնվեցին միայն այն բանի շնորհիվ, որ վերջերս չափազանց սրվել են Թուրքիա-Իսրայել հարաբերությունները, վերջինիս Գազայի հատվածում և Լիբանանի նկատմամբ ռազմական գործողությունների պատճառով: Հակառակ դեպքում այս

[3] Հավանաբար, առաջինն այն հրապարակեց *ermenihaber.am* կայքը՝ 2024 թ.. օգոստոսի 1-ին, ժամը 12:15-ին: Այնուհետև այն հրապարակեց *168.am* կայքը՝ 2024 թ. օգոստոսի 1-ին, ժամը 23:29-ին: Ինչպես և առաջին հրապարակումում, որպես լուրի սկզբնաղբյուր, մատնանշվում էր «իսրայելական մամուլը»՝ առանց որևէ մանրամասների: Որպեներ անց՝ 2024 թ. օգոստոսի 1-ին, ժամը 23:53-ին, այն վերահրապարակվեց *pastinfo.am* կայքում: Հաջորդ օրը՝ 2024 թ. օգոստոսի 2-ին, ժամը 18:03-ին հարցին անդրադարձավ ադրբեջանական *haqqin.az* կայքը: Այս անգամ որպես ՄԹ-Թուրքիա գաղտնի այս գործարքի մասին լուրի սկզբնաղբյուր նշվում էր իսրայելական *Israel Defense* կայքը:

Սակայն, հիշյալ կայքում ո՛չ օգոստոսի 2-ին, ո՛չ ավելի վաղ, ո՛չ էլ՝ «UK, Turkey, C-130J Hercules» հարցումով նման որևէ հրապարակումը բացակայում է: Այս հարցումով որոնումը *Israel Defense* կայքում բերում է միայն Դ. Արկինի 2018 թ. հունիսի 22-ի «*Far-Reaching, Stealthy and Surprising*» հրապարակումը՝ նվիրված C-130J Hercules ռազմական բեռնատար ինքնաթիռի իսրայելական «Avionics Karnaf» արդիականացված տարբերակին:

Փոխարենը, բրիտանա-թուրքական այս գործարքի առնչությամբ համացանցում կարելի է գտնել բուլղարական *bulgarianmilitary.com գործակալության* 2024 թ հուլիսի 26-ին Բոյկո Նիկոլովի (Boyko Nikolov) «*12 of retired UK's C-130 Hercules aircraft may go to Turkey*» վերնագրով մանրամասն և ուշագրավ հրապարակումը, որտեղ՝ որպես սկզբնաղբյուր, նշվում է «*various sources, ranging from England to the Balkans*», որոնք, սակայն, «*has yet to be officially confirmed*»: (Բոլոր բեռնումների օրը՝ 02.08.2024):

գործարքի մասին տվյալները հայտնի կդառնային տարիներ հետո, եթե, օրինակ, դրանք ֆիքսվեին ՍՄԽՀԻ-ի շտեմարանում:

Եվ, ամենամտահոգիչը. հիշեցնենք, որ Թուրքիան ՆԱՏՕ միջուկային զենքի կանոնավոր կերպով իրականացվող «Steadfast Noon» վարժանքներին մասնակցում է ոչ միայն իր F-16D կործանիչներով, որոնք ունակ են կրել B-61 ընտանիքի տակտիկական ջերմամիջուկային ռումբեր, այլև՝ իր C-130J ռազմատրանսպորտային ինքնաթիռներով: Վերջիններս լիցենզավորված են տակտիկական միջուկային զենքի տեղափոխման համար[4]:

Հասկանալի է, որ բոլոր այս զարգացումները պետք է դիտարկել Իրանի (հավանաբար նաև՝ ՌԴ) դեմ ուղղված ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի, Թուրքիայի և Ադրբեջանի համալիր ջանքերի համատեքստում:

[4] *Марджанян А. А.*, Ядерная Турция и регион. (19.11.2015), http://www.kavkazoved.info/news/2015/11/19/jadernaya-turcia-i-region.html (բեռնման օրը՝ 02.08.2024).